




Տ Ի Գ Ր Ա Ն Խ Ա Ն Ք Է Լ Է Կ Ե Ա Ն

Նիւ Նորքի սլարսկական ընդհանուր հիւպատոս Տիգրան խան Քէլէկեան, որ քսան տարիէ ի վեր մեծ ծառայութիւններ կը մատուցանէ Պարսկաստանի, ծանօթացնելով զայն եւ անոր արտադրութիւնները թէ՛ Նւրոպայի եւ թէ Ամերիկայի, այս անգամ աւելի մեծ գործ մը կատարած է, որ արժանի է գնահատումի։ այն է Սէն-Լուիի Համաշխարհային Յուցահանգէսին մէջ Պարսկական Տաղաւարի մը հաստատումը, որ ամբողջութեամբ հայ մտքի եւ հայ քսակի արդիւնք է։ Տիգրան խան



Սեն-Լուիի Յուզահանդեսին պարսկական քաժիւր

Քէլէկեան եւ համբաւաւոր վաճառական—Մեկենաս պ. Յովհաննէս Ս. Թաւ-
չանճեան՝ ընկերակցութեամբ՝ իրենց անձնական ծախսովը շինել տուած
են այս սիրուն տաղաւարը, որ պարսկական ոճի եւ գեղարուեստի փայ-
լուն ներկայացուցիչներէն մէկն է :

Տաղաւարը կառավարողներն եղած են բացարձակապէս Հայեր, որոնք
իրենց ցեղին պատիւ բերած են ա՛յս առթիւ եւս եւ Հայերու բարի ու
գործունեայ յատկութիւններու մասին խօսեցուցած ամերիկեան թերթե-
րու մէջ : Տիգրան խան Քէլէկեան ընդհանուր վերակացուն եղած է
Պարսկական տաղաւարին, պ. Յովհաննէս Ս. Թաւչանճեան՝ կառավարիչ,
պ. Յովհաննէս Քէլէկեան՝ քարտուղար : Իսկ Սեն-Լուիի պարսկական
փոխ-հիւպատոս պ. Մ. Սերոբեան իր աջակցութիւնը նուիրած է տաղա-
ւարին մէջի թանկագին ապրանքները ճոխացնելու համար :

Տիգրան խան Քէլէկեան Եւրոպայի, Ամերիկայի եւ մեր ազգին մէջ
ծանօթ է իբրեւ պատուաւոր վաճառական եւ իբրեւ բարի ու բարեգործ
անձնաւորութիւն : Նա մասնակցած է հեռաւոր եւ մօտաւոր ամէն տեսակ
հանգանակութիւններու, զիւ երկու տարի առաջ ինքնաբերաբար կլորիկ
գումար մը նուիրեց Կ. Պոլսի ս. Փրկչեան Ազգ. Հիւանդանոցին :

Սիրով կը յիշատակենք նաեւ, թէ Տիգրան խանի փոքր եղբայրը
պ. Յովհաննէս Քէլէկեան վերջերս արժանացած է պարսկական Շիյր ու
հոնրշիդ պատուանշանի չորրորդ աստիճանին : Մեր շնորհաւորութիւն-

ները կը յայտնենք եւ կը մաղթենք որ աւելի բարձր աստիճաններու արժանանայ այս ազնիւ երիտասարդը :

Հայ ազգն ո՛ւր որ ըլլայ՝ ցոյց կուտայ իր ցեղին բարձր կարողութիւնները , հիացում պատճառելով զինքը չըջապատող քաղաքակիրթ ազգերու : Ուրախալի երեւոյթ մըն է այս , զոր հպարտութեամբ կարձանագրենք :

Այս առթիւ՝ իրաւունքով կըսէ մեր համակրելի պաշտօնակիցը պ. Մ. Չերազ, թէ Հայերու այս տեսակ գործունէութիւնն ապացոյց է իրենց երախտագիտութեան՝ հանդէպ Վեհ. Մօզաֆֆէր-է-դ-Դին Շահի կառավարութեան :

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Որքան դժուար , բայց որքան գեղեցիկ է բարերարել : Ամէն զըժուարութեան վախճան գեղեցիկ չէ , կամ պմէն , գեղեցկին ճամբան անհարթ չէ , բայց անգամ մը գեղեցկին բարձրութեանը հասած՝ պիտի տեսնենք թէ գեղեցիկն իր ետեւն ոչինչ կը թողու որ դժուար կարենայ կուշուի : Այն որ կը քալէ դէպի բարերարութիւն , կրնայ դժուար քալել , բայց երբ անգամ մը կանգ առնէ ու յետադարձ նայաւածք մը ձգէ , պիտի տեսնէ թէ իր քայլերովը զժամ է լուսեղէն ճանապարհ մը :

Կուզէի հարուստ ըլլալ . . . բարերարելու համար , վասն զի անի գեղեցիկ է , վասն զի անի անհուն գոհունակութեամբ եւ անսահման շրճուանքով մը կը զովացնէ զրկեալին մօտը , վերելը կեցող դիպուածէն նպաստաւորութեան՝ հոգերով ու տաղտուկով պաշարուած միտքն ու հոգին , վասն զի անի ինկած , յաղթուած Արդարութեան եւ Հաւասարութեան պաշտպանն է :

Կուզէի հարուստ ըլլալ . . . բարերարելու համար , սկարին ուժ ու կորով ներշնչելու , ընտանիքին ուրախութիւն եւ երջանկութիւն մատակարարելու ու քիչ մը աւելի վեր լոյս ու խաղաղութիւն պարգեւելու համար համայնքին :

Տուէք հարուստներ , բարերարութեան դժուարութիւններու յաղթողներու թիւը ստուարացուցէք . . . , գեղեցկութիւնը պիտի միծնայ բարձրանայ , սարանայ , Նրնիկ այն ազգին որ այդ սարացած լեռնացած գեղեցկութեան հովանիին տակ կապրի :

Տուէք հարուստներ , կանխեցէք անի որ արքայութիւն կը պատրաստէ երկնքի մէկ խորշը անոնց որոնք բարիք են զորժած . շինեցէք